

ԱՆՂԵՐԵՆԻ ՀԱՅՏԱՆՈ ԱՊԱԳԱՆ

Բանավոր խոսքը ամրակայելու համար աշխարհում դարերի ընթացքում ստեղծվել են հազարավոր գրային համակարգեր: Յուրաքանչյուրն ունի իր դրական եւ բացասական կողմերը՝ առավել կամ պակաս հաջողությամբ համապատասխանելով տվյալ լեզվին: Գրային համակարգերի նման բազմազանության գոյությունը հուշում է, որ անհնար է ստեղծել թերություններից զերծ, կամ բոլոր լեզուների պահանջներին բավարարող որեւէ մեկ համակարգ: Այնուամենայնիվ վերջին հազարամյակի ընթացքը դրսեւորում է մի ակնբերելի հակում, դեպի գրային համակարգերի խոշորացում: Հիմնականում դա կատարվում է արաբական, ռուսական եւ լատինական գրերի ուղղությամբ: Ընդ որում ամենաշահեկան վիճակում հայտնվել լատինական գիրը: Եթե հնում նոր լեզուներ էին կլանում նաեւ արաբականը՝ (իսլամի տարածման հետ), ռուսականը (հատկապես 20-րդ դարում՝ կոմունիզմի տարածման հետ), ապա վերջին՝ 19–20 դարերն անցնում են լատինական գրի (եւ եւրոպական գաղափարախոսության) անվերապահ հաղթարշավի դրոշի ներքո: Լատինագրի անցած ամենահայտնի լեզուների շարքում կարելի է նշել նախ եւ առաջ ռումիներենը (ռուսատառից), թուրքերենը (արաբատառից), վյետնամերենը (գաղափարագրայինից) եւ այլն: Ներկայումս, մեր, հայերիս շրջանում էլ կան լատինագրի անցնելու կողմնակիցներ: Ավելին, փորձեր են արվում նույնիսկ ռուսերենը, արաբերենը, չինարենը անցկացնել լատինատառի: Վերջապես կան առաջարկներ համաշխարհային գիր ստեղծելու ուղղությամբ (նման մի առաջարկ տե՛ս http://astrolingua.spb.ru/ALFAVIT/inter_rus.htm): Առաջարկված է նաեւ նոր համաշխարհային գաղափարագրության համակարգ, որն իր հեղինակի անունով կոչվում է «Բլիսսնշաններ», եւ, ի դեպ, արդեն ունի որոշ տարածվածություն:

Ո՞րոնք են համաշխարհային գրի անցնելու դրական եւ բացասական կողմերը եւ դժվարությունները: Դրական կողմն ակնհայտ է. բոլոր ազգերը հնարավորություն կստանան եթե ոչ հասկանալ, ապա գոնե կարդալ ցանկացած լեզվով գրված նյութերը, ինչը նույնպես քիչ բան չէ ազգամիջյան հարաբերությունների բարելավման համար: Իսկ հիմնական ինդիքն այն է, որ այլ գրի անցնելը նշանակում է տվյալ լեզվի կրողների խզում իրենց նախնիների մշակութային ժառանգությունից: Ուստի եւ բոլոր դարերում ազգերը դիմադրում են դրան եւ հաղթահարել այդ արգելքը հաջողվում է միայն այն ազգերի դեպքում, որոնք չունեն քիչ թե շատ ծավալուն ազգային գրականություն: Դրանից բացի այն ազգը, որի գրային համակարգին է անցնում տվյալ լեզուն վերջինիս նկատմամբ հաղթողի կերպար է ձեռք բերում, եւ նույնիսկ տարբերակ է ստանում իրոք կլանել նրան նախ՝ լեզվամշակութային եւ ապա՝ կենսաբանորեն:

Թերեւս, այլ կլինի պատկերը, եթե անցումը կատարվի ոչ թե որոշակի ազգի գրային համակարգի, այլ որեւէ չէզոք համակարգի: Սակայն ընդունել բոլորովին նոր համակարգ նշանակում է ընդունել չփորձարկված համակարգ, որի թերությունները կարող են բացահայտվել ավելի ուշ: Հետեւապես բնական է, որ նման միջազգային գրի հիմքում բոլոր հեղինակները դնում են լատինական գիրը: Նախ այն անցել է հազարամյակների փորձաշրջան, այն արդեն իսկ գործածում են հարյուրավոր ազգեր եւ այս վերջին հանգամանքն էլ թվում է որպես ապահովագրություն ազգային զավթողականության մեջ մեղադրվելուց:

Սակայն ազգերն անվասար չափով են տարբերվում իրարից, կազմելով վերազգային խմբեր: Ակնհայտ է, որ եւրոպական ազգերը բոլոր իրենց տարբերություններով հանդերձ շատ ավելի մոտ են իրար, քան արաբական ազգերը (որոնց միջեւ նույնպես կան տարբերություններ), կամ հարավ-արեւելյան Ասիայի ազգերը: Իսկ դա նշանակում է, որ լատինական գիրը, թեեւ չի ընկալվի, որպես այս կամ այն ազգի նվաճողական գործիք, սակայն կդիտվի որպես միասնական Եւրոպայի աշխարհակալության գործիք: Իսկ կլանվող ազգի համար ի՞նչ տարբերություն, իրեն մե՞կ առանձին ազգ է կլանում, թե՞ մի քանի ազգերի միություն, ինչպես որ եղնիկի համար միեւնույն է, թե իրեն կուտի մեկ առյուծ, թե՞ առյուծների, հովազների եւ շնագայլերի մի ոհմակ:

Հաշվի առնելով ասվածը, կարելի է գալ հետեւյալ եզրահանգումների.

– «գրային պատերազմները» աներեւույթ են, բայց իրականություն,

– ներկայումս հաղթում է «եւրալատինական» բանակը:

Լավագույն պաշտպանությունը հարձակումն է: Ինչո՞ւ մենք պիտի նստենք ու սպասենք, որ մեզ ուտեն: Ավելի լավ չէ՞ մենք իրենց ուտենք: Այլ կերպ ասած. ինչո՞ւ համաշխարհային գիրը չպիտի լինի հայերենը: Դա կարող է ցնդաբանություն թվալ, բայց մի՞թե զարմանալի չէր հազարամյակներ առաջ ներկայիս Հայաստանից չափերով փոքր Մակեդոնական երկրի կողմից աշխարհի կեսի նվաճումը: Այնպես որ իրենց թողնենք դրա անհնարինության մասին ենթադրությունը եւ անցնենք գործի:

Որո՞նք են հայոց գրի առավելությունները: Դրանք են.

– կատարյալ այբբենական համակարգ լինելը,

ի տարբերություն լատինական գրի, որի գրանշանները տարբայնորեն տարածվելով աշխարհով մեկ ստացել են տասնյակ իրարամերժ արժեքներ: Եւ միաժամանակ, թեեւ լատինականի համեմատ՝ աննշան չափով, բայց այնուամենայնիվ.

– այլ լեզուների համար փորձարկված լինելը.

հայոց գիրը գործածվել է թուրքական լեզուների՝ թուրքերենի եւ ղաչաղերենի համար, հնդեւրոպական լեզուներից՝ քրդերենի համար: Կարելոր է նաեւ.

– *գրանշանների ավելի մեծ թիվը.*

անհնար եւ անիմաստ է աշխարհի լեզուներում պատահող բոլոր հնչյունների համար գրանշաններ ստեղծել: Կատարյալ չափազանց մեծ համակարգ, որոնցից միայն մի չնչին մասը գործածելի կլինի առանձին վերցված որեւէ լեզվի համար: Բայց գոյություն ունի գրանշանների մի որոշակի նվազագույն քանակություն, որոնց համապատասխանող հնչյունները կան գրեթե բոլոր լեզուներում, եւ հայոց այբուբենուն ներկայացված է այդպիսի գրանշանների բավական ընդգրկուն կազմ: Բացակայող նշանները կարող են ստեղծվել, ինչպես եւ ներկայիս լատինագրում կամ արաբագրում է ընդունված, տարբերիչ եւ օժանդակ այլ նշանների միջոցով: Այսպես, վերոհիշյալ միջազգային այբուբենի կազմում նախատեսվում է 44 գրանշանի կիրառում: Այս թիվը 6-ով է գերազանցում հայոց գրանշանների թիվը, մինչդեռ վերջինս իր հերթին 12-ով գերազանցում է լատինական այբուբենի 26 գրանշանները: Ինչպես տեսնում ենք, լատինականի դեպքում անհրաժեշտ է 18 նոր գրանշանի ստեղծում, մինչդեռ հայերենի 38 գրանշանները կարող են բավարար լինել, որպես միջազգային այբուբենի կորիզ, առանց նոր գրանշանների հոփնման: Ճիշտ է, այլ ազգերի ներկայացուցիչները ստիպված կլինեն երկու անգամ ավելի շատ գրանշան սովորել, քան լատինականի դեպքում, սակայն դա ճիշտ է միայն լատինական գրի ծանոթ անձանց համար, որոնք կազմում են աշխարհի բնակչության միայն մեկ երրորդը, իսկ մոլորակի բնակչության հիմնական մասը նման այբուբենի ընդունման դեպքում միեւնույն է ստիպված կլինի յուրացնել առնվազն չորս տասնյակ գրանշան: Իսկ եւրոպացիների դեպքում վիճակը կհեշտացնի այն, որ հայոց գիրը.

– *եւրոպական տիպի համակարգ է:*

Յայոց գիրն ինչպես եւ լատինականը տառային տիպի է, ունի մեծատառեր եւ փոքրատառեր, տառերը գրվում են անջատ, գրի ուղղությունը ձախից աջ է: Յայոց գիրը ունի բոլոր այն տպագրական առանձնահատկություններն ու ոճերը, որոնք բնորոշ են նաեւ լատինագրին: Եւ վերջապես.

– *հենց այն, որ դա ոչ շատ մեծ ազգի գրային համակարգ է:*

Մեծ ազգերի ներկայացուցիչները գիտակցելու են, որ հայերը, պարզապես իրենց թվային փոքրության պատճառով, ի վիճակի չեն լինի ձուլել իրենց: Ճիշտ է, իրենք կկորցնեն իրենց ազգային խորհրդանիշներից կարելորդ՝ գիրը, սակայն իրենց ոչ ոք չի նվաճի: Իսկ եւրոպական ազգերի դեպքում դա առհասարակ խնդիր չի, քանի որ իրենք առանց այդ էլ ուրույն այբուբեն չունեն, իսկ տնտեսական հզորության շնորհիվ հեշտությամբ կկարողանան գրական ժառանգությունը անցկացնել նոր գրի: Ի դեպ, եւրոպացիները արդեն իսկ նման մի քայլի դիմել են, հրաժարվելով իրենց ազգային կարելոր խորհրդանիշներից՝ ազգային արժույթներից՝ հօգուտ համաեւրոպականի՝ եւրոյի՝ հանուն տնտեսական միասնության եւ զարգացման:

Ինչ վերաբերում է մեզ, հայերիս, ապա նույնիսկ եթե այս ծրագիրը հաջողության հասնի, դա դեռ չի նշանակում, որ մենք կլուծենք մեր ազգային արժանապատվության եւ ինքնասիրության խնդիրը, եւ չի բացառված, որ անգամ այս դեպքում մեզնից շատերը ձգտեն իրենց երեխաներին տալ անգլական եւ ռուսական դպրոցներ. նույնիսկ եթե դրանք լինեն հայատառ անգլերեն եւ հայատառ ռուսերեն:

Իսկ ստորեւ առաջարկում եմ երկու հայտնի գրվածք հայատառ կատարմամբ: Նշեմ միայն, որ առաջարկվող գրերում գործածվել են մի շարք նոր, ինչպես նաեւ ներկայումս լայնորեն գործածվող տարբերիչ նշաններ, վերցված լատինագրից եւ հայ խազագրությունից:

1.

Յա պոմնու չուղնըյէ մգնավէյէ:

Պէրէդա մնոյ յավիլաւ տի,

Կակ միմալոտնըյէ վիդէյէ,

Կակ գէնիյ չիստըյ կրասատի:

2.

Ի՞գ Գէր Էսիբըդի գըույթ տու լիսըն տու մայ ստո՛րի,

Օլ ըբաուտ Գը գը՛լ հո՛ւ քէյմ տու ստէյ:

Շի՛գ Գը քայնդ օՖ գը՛լ յու Լօստ սըու մալլ իտ մէթս յու սօրի,

Ստիլ յու դոն՛տ րիգրետ ը սիւզլ դէյ:

Ըհ գը՛լ, գը՛լ: